ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 1

«11» 01 2019թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի N 1 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության նախաքննության մարմինների կողմից կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ տեղեկությունների և վիճակագրական տվյալների տրամադրումը հստակեցնելու, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի հունվարի 22-ի N 1 հրամանով հաստատված ուղեցույցի կարգավորումները «Հանրային ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-206-Ն օրենքի դրույթներին համապատասխանեցնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի հունվարի 22-ի՝ «Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ տեղեկությունների և վիճակագրական տվյալների ներկայացման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» N 1 հրամանով հաստատված 1-ին հավելվածի 4-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) բ) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ) քրեական հետապնդման ենթարկված պաշտոնատար անձանց (կասկածյալների և մեղադրյալների) գործունեության ոլորտները (առողջապահություն, կրթություն, իրավապահ, հարկային, մաքսային, պետական գնումների, սոցիալական ապահովության, էներգետիկայի և բնական պաշարների, դատական, տեղական ինքնակառավարման և այլն), պաշտոնները, այդ թվում՝ նշելով, թե նրանցից քանիսն է հանդիսանում

բարձրաստիճան պաշտոնատար անձ և քանիսն է «Հանրային ծառայության մասին» օրենքի համաձայն զբաղեցնում քաղաքական պաշտոն»,

2) բ) ենթակետից հետո լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Սույն ուղեցույցի իմաստով բարձրաստիճան պաշտոնատար անձ են հանդիսանում՝ Հանրապետության Նախագահը, վարչապետը, փոխվարչապետները, Ազգային ժողովի պատգամավորները, սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, նախարարները և նրանց տեղակալները, դատախազները, քննիչները, օրենքներով ստեղծված պետական մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները և այդ մարմինների անդամները, կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալը և կենտրոնական բանկի խորհրդի անդամները, կառավարությանը ենթակա պետական կառավարման մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները, վարչապետին ենթակա պետական կառավարման մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները, հաշվեքննիչ պալատի նախագահը և նրա անդամները, Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալները, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալները, սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարը, վարչապետի աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալները, կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահը և անդամները, Երևանի քաղաքապետը և նրա տեղակալները, մարզպետները և նրանց տեղակալները, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարները, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարը, Հանրապետության Նախագահի խորհրդականները և օգնականները, Ազգային ժողովի նախագահի խորհրդականները և օգնականները, վարչապետի խորհրդականները և օգնականները, նախորդ տարվա հունվարի 1-ի դրությամբ 50000 և ավելի բնակիչ ունեցող համայնքների ղեկավարները:»:

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

3. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության նախաքննության մարմինների ղեկավարներին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ